



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 նոյեմբերի 2022թ. թիվ 813-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 10-Ի ԹԻՎ 231-Ա
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010թ. մարտի 18-ի թիվ 113-Ն հրամանով հաստատված «Պետական ուսումնական հաստատության» կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի ձևավորման» կարգի 6-րդ կետի 1)-ին և 2)-րդ ենթակետերը, 7-րդ կետը և 9-րդ կետի 2)-րդ ենթակետը, հաշվի առնելով «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 1 միջնակարգ դպրոց» և «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ների կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի նախագահի 18.11.2022թ. գրությունը և ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 25.11.2022թ. թիվ 01/09.3/29916-2022 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

ՀՀ Լոռու մարզպետի 2021թ. մայիսի 10-ի «ՀՀ Լոռու մարզային ենթակայության պետական ուսումնական հաստատությունների խորհուրդների կազմերը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2016 թվականի մարտի 15-ի թիվ 75-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 231-Ա որոշման 2-րդ հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները՝

«32. «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» և «ՀՀ Լոռու մարզի Ախթալայի թիվ 2 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ» մասում «Վարդույան Սասուն» բառերը փոխարինել «Ավետիսյան Կարեն» բառերով, «Նիազյան Արայիկ» բառերը՝ «Սահակյան Ռուբեն» բառերով, իսկ «Ավետիսյան Կարեն» բառերը՝ «Նիազյան Արայիկ» բառերով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

25/11/2022

X

ԱՐԱՄ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱԶԱՏՐՅԱՆ

2022թ. նոյեմբերի 25
ք.Վանաձոր